**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ԵԱ-ԳՀԾՁԲ-24/65 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **27 հունվարի 2025թ.**

2025թ.-ի հունվարի 7-27-ը ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման ԵԱ-ԳՀԾՁԲ-24/65 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Սուքիասյան՝ | «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Ն. Մելքոնյան՝ | «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվապահ, |
| Ս. Մկոյան՝ | «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի տեխնիկ հաշվառիչ, |
| Ն. Բաղդասարյան՝ | «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվապահ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Ա. Առաքելյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, բացակայում էր «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի տնտեսագետ՝ Վ. Սանթուրյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և իրավերի պայմաններին համապատասխանության մասին:
4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ-ի հունվարի 7-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում ժամը 17:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման ընդամենը միավոր գների հանրագումարը (ՀՀ դրամ) | Գնման հայտով սահմանված պայմանագրի ընդհանուր առավելագույնը գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | 255,000.00 | 75,000,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԱ-ԳՀԾՁԲ-24/65 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Ավտոտեխ պլյուս»ՍՊԸ | ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թղմ 16/1 | +37491096091 | Dadamyan.arthur@mail.ru | 00225694 |
| 2 | «Գենկոն» ՍՊԸ | Գ. Մասիս Բ. Մարտիրոսյան 23փ | +37495606044 | genkon84@mail.ru | 04237792 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և

արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված հայտում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1-ով ներկայացվող դիմում-հայտարարության փաստաթղթում բացակայում է հրավերով պահանջվող սպասարկող բանկի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև հայտը ստորագրված է այլ անձի կողմից, ում նման լիազորություններ վերապահված չեն:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված պայմանագրի ընդհանուր առավելագույնը գինը | Գնման հայտով սահմանված գնման ընդամենը միավոր գների հանրագումարը | Մասնակիցների առաջարկած միավոր գների հանրագումարը | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| N | անվանումը | | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | «Ավտոտեխ պլյուս»ՍՊԸ | 75,000,000.00 | 255,000.00 | 190,833.33 | 38,166.67 | 229,000.00 |
| | | «Գենկոն» ՍՊԸ | | | 189,500.00 | 37,900.00 | 227,400.00 |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

08.01.2025թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

10.01.2025թ-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ ներկայացվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

15.01.2025թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հաշվի առնելով, որ իրականացված հայտերի գնահատման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել պարզելու Ընթացակարգին հայտ ներկայացրած

մասնակցի՝ «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից տրամադրված տեղեկատվության իսկությունը, մասնավորապես՝

- Հիմնավորում՝ տեխնիկական սպասարկման կենտրոնը արդյոք ունի հետևյալ նվազագույն տեխնիկական հնարավորությունները և պայմանները մասնավորապես՝
- Թիթեղագործական և ներկման հարդարման աշխատանքների համար նախատեսված սարք սարքավորումներով,
- Վերը նշված աշխատանքները կատարող որակավորված անձնակազմ աշխատանքային փորձով,
- ՈՒնենա տեխնիկական սպասարկման կետեր առնվազն 5-6 մեքենա վերանորոգելու համար՝ 10-15 աշխատանքային օր ժամկետում (բացառությամբ որոշ դեպքերի, որոնք կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ),
- Ունենա հսկվող տարածք առնվազն 6-10 մեքենա տեղակայելու համար,
- Ապահովված լինի թափքի դեֆորմացիայի ուղղման աշխատանքների համար համապատասխան սարքավորումներով,
- Կադաստրային տվյալների համաձայն մասկացի կողմից ներկայացված տարածքը չի հանդիսանում «Գենկոն» ՍՊԸ-ի սեփականությունը: Խնդրում ենք ներկայացնել տվյալ տարածքի սեփականության կամ վարձակալության վերաբերյալ հավաստող փաստաթղթեր,

Հանձնաժողովը 22.01.2025թ-ին որոշեց հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը, նիստը կասեցնել և ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մինչև 2025 թվականի հունվարի 23-ը ներառյալ ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվությունը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

24.01.2025թ-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են պահանջված փաստաթղթերի մի մասը, իսկ ներկայացված տվյալները չեմ համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

1. Մասնակիցը չի ներկայացրել որևէ որակավորում անձնակազմի աշխատակիցների վերաբերյալ:
2. Մասնակցի կողմից նշված չափսերը չեն համապատասխանում իրականությանը մասնավորապես ՝ մասնակցի հավաստմամբ անգարներից մեկը 177 մ2 (21*8.4 մ2) է, սակայն ըստ Կադաստրային տվյալների հատակագծով այն 166 մ2 է, որտեղ հնարավոր է տեղավորել ստենդ և 8,6մ երկարությամբ 2,5 մ լայնությամբ 3 ավտոբուս, մասնակցի կողմից նշված մյուս անգարը որը կազմում է 85մ2 (13x6,5) հնարավոր է տեղավորել 8,6 մ երկարությամբ 2,5 մ լայությամբ 1 ավտոբուս:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ վթարված ավտոբուսի վերանորոգման համար բեռնախցիկը, կողային կափարիչները և առջևի ծացկոցը բացված վիճակում վերանորոգելու համար անհրաժեշտ է մեկական մետր ազատ տարածք, սիկ Ընթացակարգի հրավերի նախապայմաններից մեկն այն էր, որ պետք է

սպասարկող կազմակերպությունը ունենա տեխնիկական սպասարկման կետեր առնվազն 5-6 մեքենա միաժամանակ վերանորոգելու համար:

3. Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի.

«Հոդված 135. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը.

• Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման: Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

• Շարժական գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Հոդված 610. Վարձակալության պայմանագրի ձևը.

1. Վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր:

2. Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Հոդված 611. Անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումը: Անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:»:»

Հաշվի առնելով վերոգրյալը, «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրում բացակայում է՝ և՛ նոտարական վավերացումը, և՛ պետական գրանցումը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

27.01.2025թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով դիմել Պատվիրատուի ղեկավարին, իսկ նշյալ կետը իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն նախաձեռնել գործընթաց՝ «Գենկոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

4. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «Ավտոտեխ պլյուս»ՍՊԸ՝ | բավարար |
| | «Գենկոն» ՍՊԸ՝ | անբավարար |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

27.01.2025թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած ընդամենը միավոր գների հանրագումարը /առանց ԱԱՀ/ | Պայմանագրի համար գնման հայտով առավելագույն գինը /ներառյալ ԱԱՀ/ (նշվում է միայն հաղթող ճանաչված մասնակցի դաշտում) |
|---|---|---|---|---|
| 1 | «Ավտոտեխ պլյուս» ՍՊԸ | X | 190,833.33 | 75,000,000.00 |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 27.01.2025թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Ավտոտեխ պլյուս» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել :

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ն. Մելքոնյան

Ս. Մկոյան

Ն. Բաղդասարյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան